

42

Պրակտիկական բազմալեզու լեզուների, մեթոդ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

(ՏԱՐՐԱԿԱՆ ՑԵԿ ԿՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

9

Մ-43

ԼՈՒՍՊԱՐԲԱՏ

ՑԵՐԵՎԱՆ

1938թ.

Ա.Ա.

9
Մ-43

2011-02

Պալատներ բոլոր յերկրներ, միացի

22 JUN 2005

ՀԱՅԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՍԱՏՈՒՆԵՐԻՆ

(ՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՎՈՋ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԼՈՒՍՊԱՐԲԱՐԱՏ

ՑԵՐԵՎԱՆ

1938թ.

Պատ. խմբ. Հ. ՀԱՅԿԱՍԻՆԻ

Տեխ. խմբագիր և սրբագրիչ Հ. ՄԱՆԼՅԱՆ

ԳԻՏԵՆԱԼ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Շուտով լայն կրթացվեն մեր դեպ-
րոցների դռները և ներս կհոսի մեր
բերկրալից, առողջ, հանգստացած,
նոր ուժեր հավաքած դպրոցական
յերիտասարդության ալիքը: Նրան
սպասում է մեր կուսակցության ու
կառավարության արժեքավոր նվե-
րը՝ այս ուսումնական տարում դեպ-
րոցը ստանալու յե ԽՍՀՄ պատմու-
թյան նոր դասագիրքը:

Դա միջնակարգ դպրոցի յերրորդ
և չորրորդ դասարանների դասագիրք
է: Բայց նրա նշանակությունն ավելի
լայն է: Դասագիրքը հետաքրքրու-
թյամբ կկարդա ամբողջ ուսանող
յերիտասարդությունը: Այն կուսում-
նասիրեն պատմության բոլոր դասա-
տուները: Այդ դասագրքով սկսվում
է խորհրդային քաղաքացու ընդհա-
նուր կրթության և քաղաքական դաս-
տիարակության սխեմի կարեւորա-
գույն դիտություններից մեկի՝ պատ-
մագիտության լայն ու բեղմնավոր
ուսումնասիրումը և դասավանդումը:

Իր հրաշալի հայրենիքի պատմու-
թյունը գիտենալն անխցիլիորեն կադ-
ված է խորհրդային հայրենասիրու-
թյան հետ, ջերմ սիրո զգացմունքի
հետ դեպի այն յերկիրը, վորը փա-
րոսի նման լույս է ստրիս աշխատա-
վորի, իր աղատության համար պայ-
քարող մարդկության ամբողջ աշ-
խարհին:

Սոցիալիստական հեղափոխության
հաղթանակը պատահականություն չէ
մի յերկրում, վորը մի ժամանակ
ամենահետամնաց յերկիրն էր հա-
մարվում Յեվրոպայում: Այդ հաղթա-
նակն ավարտեց դյուզացիական պա-

տերազմների, պրոլետարիատի յեր-
կարատեով ու համառ պայքարի յեր-
կար շղթան: Այդ պայքարը պարտու-
թյան եր դասապարտված, քանի դեռ
բանվոր դասակարգը չէր ստեղծել իր
բոլշևիկյան կուսակցությունը, քանի
դեռ չէր կազմվել բանվոր դասակար-
գի և դյուզացիության ամուր, ան-
խրդելի դաշինքը:

Միմիայն անցյալի լույսի տակ իր
ամբողջ վեհություններ յերևան է դա-
լիս մեր փառավոր ներկան: Սոցիա-
լիստական Մեծ հեղափոխությունը
կատարել են հիանալի ժողովուրդ-
ներ, վորոնք իրենց կյանքի անցյալ
դարերում ևս ցույց են տվել իրենց
անդուսալ կամքը՝ մարտնչելու իրենց
ազդային անկախության համար,
մարտնչելու բոլոր շահագործողների
դեմ: Ռուսական կուլտուրայի բարձ-
րագույն նվաճումը՝ Լենինիցմը,
դարձավ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդնե-
րի սեփականությունը: ԽՍՀՄ պատ-
մությունը հետաքրքիր, հրապուրիչ
պատկերներ է բաց անում այն պայ-
քարի, վորը մղել են ուսական,
ուկրայնական, վրացական, բելոու-
սական և այլ ժողովուրդները ցարե-
րի ու բոյարների դեմ, կարվածատե-
րերի ու կապիտալիստների և ոտալր-
երկրյա նվաճողների դեմ:

Բոլշևիկների կուսակցությունը
հսկայական նշանակություն է տալիս
պատմությանը՝ խորհրդային քաղա-
քացու իր հայրենիքի մարտիկի, սո-
ցիալիզմ կառուցող քաղաքական
դաստիարակության դործում: Յերեք
տարի առաջ, ԽՍՀ Միության ժող-
կոմիտեի և Համ. Կ(բ)Կ կենտկոմի

295
42

1934 թ. մայիսի 16-ի հայտնի վո-
լոման մեջ, վորը հրապարակված է
ընկեր Ստալինի և ընկեր Մալոտովի
ստորագրութեամբ, նշված էր պատ-
մութեան դասականի ման անբավարար
դերվածքը դպրոցներում: Յե՛վ դասա-
գրքերի, և՛ դասավանդման հիմնա-
կան, սխառմատիկ ընույթը: Իսկա-
կան գիտական պատմութեանը վո-
լաքնակը և գոհհիկ «սոցիոլոգիա-
յով»:

Կուսակցութեանը և կառավարու-
թեանը պահանջներն, վոր պատմու-
թեան ուսումնասիրումը դպրոցում
հարստացնի մեր յերիտասարդութեա-
նը փաստերի ու դեպքերի զերեկի-
քով՝ նրանց ժամանակագրական հա-
ջորդականութեամբ, պատմական դո-
ծիչներին ընույթագրումը: Պատմու-
թեան դասավանդումը պետք է աչքի
ընկնի իր մատչելիութեամբ, իրագը-
նութեամբ, կոնկրետութեամբ: Շարա-
դութեան ձևը պետք է լինի կենդա-
նի, հետաքրքրաշարժ: Հենց այդ-
պես, պատմական կոնկրետ նյութին
ծանոթանալով պետք է աշակերտը
մոտենա պատմութեան մարքսիստա-
կան ըմբռնմանը: Այդ պարզորոշ ու
ճշգրիտ պահանջները չհանդիմեց իս-
կույն իրականացնել: Պատմութեան
այդպիսի դասավանդման, այդպիսի
դասադրքերի ստեղծման անհապա-
հիմ, վորպես ծանր ու մեռյալ բեռ,
ընկած էր հակադասական, հակա-
բուլշևիկյան լիկլիդատորական այն
տրադիցիան, վորը ստեղծել էր Պոկ-
րովսկու «դպրոցը»: Նա ըստ էյու-
թեան վերացրել էր պատմութեանը,
փոխարինելով վերջինս հասարակա-
կան-տնտեսական ֆորմացիաների
պատմութեամբ, դրեկով պատմու-
թեանը նրա ամբողջ բաղմապիսի,
կենդանի քաղաքական բովանդակու-
թեանից:

«ԽՍՀՄ պատմութեան» և «Նոր
պատմութեան» նոր դասադրքերի
կոնսպեկտների առթիվ ընկերներ

Ստալինի, Ժդանովի և Կերովի արած
զիտողութեանները, վորոնք հրապա-
րակվեցին 1936 թ. հունվարի 26-ին,
մերկացրին Պոկրովսկու հակապատ-
մական «դպրոցը» վնասարար դերը:
Այդ զիտողութեանները, վորոնք
պատմական ուղենիշ դարձան խոր-
հըրդային պատմադիտութեան մեջ,
ուղղակի և պարզորոշ ցուցումներ
տվին դասադրքը կազմողներին և
պատմաբաններին:

Ընկերներ Ստալինը, Ժդանովը և
Կերովը գրում էին՝ «Մեզ հարկա-
վոր է ԽՍՀՄ պատմութեան այնպիսի
դասադրք, վորտեղ վերլուծույթա-
յի պատմութեանը չկտրվի ԽՍՀՄ
մյուս ժողովուրդները պատմութեա-
նից-այդ ամենից առաջ, — վորտեղ
ԽՍՀՄ ժողովուրդները պատմութեա-
նը չկտրվի համայնկրոսական պատ-
մութեանից, ընդհանրապես համաշ-
խարհային պատմութեանից — այդ
յերկրորդ»:

1936 թ. մարտի 3-ին ԽՍՀՄ Միու-
թեան Ժողովուրդները և Համ Կ(բ)Կ
կենտրոնը վորոշեցին կազմակերպել
միջնակարգ դպրոցի յերրորդ և չոր-
րորդ դասաբանների ԽՍՀՄ պատմու-
թեան լավագույն դասադրքի կոն-
կուրս: Կոնկուրսի պայմանները պա-
հանալում էին՝ «Պատադրքը պետք
է կոնկրետ լինի և պատմականորեն
ճշգրիտ: Դրա հետ միաժամանակ նա
պետք է շարադրված լինի ցայտուն
կերպով, հետաքրքիր, գեղարվեստա-
կանորեն և լիովին մատչելի լինի
հիշյալ հասակի աշակերտներին հա-
մար»:

Կուսակցութեան և կառավարու-
թեան վորոշումները, ընկեր Ստալինի
ցուցումները, կոնկուրսի կազմակեր-
պումը-այդ բոլորը վկայում է այն
հակայական նշանակութեան մասին,
վորը տալիս էր Կենտրոնական Կոմի-
տեն և կառավարութեանը ԽՍՀՄ-ի
պատմութեան դասավանդմանը դրոշ-
րոցում: Առանց պատմութեան հիմ-

նական փաստերն ու իրադարձու-
թեաններն իմանալու չի կարող լինել
իսկական մարքսիստական կրթու-
թեան և վոմունիստական դաստիա-
րակութեան: Դպրոցը խորհրդային
յերիտասարդութեանը պետք է տա
զիտական այն պաշարը, վորով կա-
րող է նա դաստիարակել իր մեջ
խորհրդային զիտակից քաղաքացուն,
սրբիկտարական հեղափոխականին,
սոցիալիզմի կառուցողին անհրաժեշտ
բոլոր հատկութեանները:

Միջնակարգ դպրոցի յերրորդ և
չորրորդ դասաբանների ԽՍՀՄ-ի
պատմութեան լավագույն դասադրքի
կոնկուրսի կառավարական հանձնա-
ժողովի ժյուրիի այսօր հրապարակ-
վող վորոշումը ցույց է տալիս, վոր
պատմական զիտութեան ճակատում
փոքր հաղթանակ չի տարվել: Հակա-
լենինյան «Թեորիաների» ջախջա-
խումը պառզ տվեց: Ընկեր Ստալինի
ցուցումները կենդանի արձագանք
դտան խորհրդային պատմաբանների
մեջ: Մարքսի, Ենգելսի, Լենինի և
Ստալինի ստեղծագործութեաններից
պատմաբանները արժեքավոր շատ
նյութեր, ընդհանրացումներ ու մրո-
քեր քաղեցին: Կոնկուրսին ներկայաց-
ված դասադրքերում, չնայած այդ
դասադրքերի բոլոր թերութեաննե-
րին, վերացական, վերացական սո-
ցիոլոգիական սխեմաների փոխարեն,
պատմական-ժամանակագրական հե-
տեվողականութեան կա պատմական
իրադարձութեանների շարադրման
մեջ, տրվում է պատմական կարեւո-
րագույն յերեւութների նկարա-
դրութեանը, տրվում են ժամանակա-
դրական հիմնական տարեթիվեր և
պատմական դործիչների բնութա-
դրումը:

Կառավարական հանձնաժողովը հա-
վանութեան տվեց սրբիկտար Ա. Վ.
Շեռտակովի խմբագրութեամբ կազ-
մված «ԽՍՀՄ-ի պատմութեան հա-
մառոտ դասընթացը» գրքին և առա-

ջարկեց վերջինիս, վորտեղ դասա-
դրք յերրորդ ու չորրորդ դասաբան-
ներին համար: Այսպիսով մեր դպրոցը
ստացավ ԽՍՀՄ-ի պատմութեան
իսկական մարքսիստական դասա-
դրք, վորը հիմնականում բավարա-
րում է պատմութեան դասավանդմա-
նը մեր կուսակցութեան ու կառա-
վարութեանը ներկայացրած պահանջ-
ներին: Դրանով նոր եջ է բացվում
խորհրդային դպրոցի պատմութեան
մեջ, մի դպրոց, վորն այժմ կայուն
և վստահելի ձեռնարկ է ատանում
խորհրդային ապագա քաղաքացուն
քաղաքականապես դաստիարակելու
համար:

Սակայն կոնկուրսի կառավարական
հանձնաժողովի ժյուրին չսահմանա-
փակվեց մի դասադրքին հալանու-
թեան տարով և նրան պարզեցնալու-
յով: Պատմադիտութեան ճակատում
ձեռք բերված անվիճելի նվաճումը
չի կարող թաղցնել այն փաստը, վոր
խորհրդային պատմադիտութեան առ-
ջն գրված ինդիկները զեռ հեռու
յեն լուծված լինելուց: Առաջին պար-
զեվը մոշ վոքին շտրվեց: Այդ նշա-
նակում է վոր լավագույն դասադրք-
քն ել պետք է կառարկագործվի:
Իսկ գլխավորը՝ կոնկուրսին ներկա-
յացված դասադրքերը ցույց տվին,
վոր պատմադիտութեան մեջ մարք-
սիզմ-լենինիզմի համար սկսված պայ-
քարը զեռ հեռու յն ավարտված չի
նեկուց: Վոր մերկայացված կեղծ պատ-
մաբանների պատմաոտած վնասակար
«Թեորիաները» զեռ կենդանի յեն
մեր զիտական պատմական միջավայ-
րում:

Կառավարական հանձնաժողովի,
ժյուրիի վորոշումը հակայական նշա-
նակութեան ունի պատմութեան առ-
պարիզում, քաղաքական լուսավորա-
կան աշխատանքի առաքելիզում, կու-
սակցական ուսման առաքելիզում մեր
կառարկելիք հետագա աշխատանքի
համար: Վորոշումը նշավակում է

պատմական փաստերի գիտական չա-
րագրութեան փոխարինումը «բացա-
րանշական նշաններով, հիացմունքի
բացականչութիւններով և ամեն տե-
ւակ սրտառուչ անեկդոտներով»...

Մեր կուսակցութիւնը վոչ թե
ընդհանուր գեղարարականը, այլ
բայժ և խորն աշխատանք է պա-
հանջում պատմաբաններից ու ման-
կաբարձներից, կուլտուրական ճա-
կատի բոլոր աշխատողներից: Կու-
սակցութիւնը և վառարարութիւնը

ոգնում են այդ աշխատանքին իրենց
ցուցումներով, վորոնց խորն իմաստը
դժվար է դերագնահատել: Այդ ցու-
ցումները վոչ միայն պատմադիտու-
թեան, այլև ամբողջ պրոպագան-
դիստական աշխատանքի համար ա-
ռաջնակարգ նշանակութիւն ունեն.
դրանք պետք է լմբռնել և ուսում-
նասիրել:

(«ՊՐԱՎԴԱ»-յի 1937 թ. ոգոս-
տոսի 22-ի առաջնորդողը)

Պրոֆ. Ա. Վ. ՇԵՍՏԱԿՈՎ

ԻՆՋՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴԵԼ ԽՍՀՄ-Ի ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔՈՎ*)

Մամուլում լույս տեսած հոդված-
ներից արդեն հայտնի յե ԽՍՀ Միու-
թեան պատմութեան նոր դասագրքի
համառոտ հինքը (կանխան): Կարելի
յե ասել, վոր այդ կանխան ընդգըր-
կում է մեր հայրենիքի պատմական
դարբացման բոլոր կարեւորագույն
եռապնները: Սակայն, վորպետի ա-
վելի պարզ, ճշգրիտ պատկերացնեք
նրա առանձին մոմենտները, անհրա-
ժեշտ է ուսուցչութեան ուղադրու-
թիւնը դարձնել առանձին դասերի
վրա:

Առաջին դասը ներածութիւնն է:
Նա յերեխաներին տալիս է ընդհա-
նուր հասկացողութիւն մեր հայրե-
նիքի մասին: Աշակերտների առաջ,
ամենից առաջ ընդգծւում է ԽՍՀՄ-ի
և աշխարհի այլ պետութիւնների
միջև յեղած տարբերութիւնը:
ԽՍՀՄ-ը սոցիալիզմի յերկիր է: Այս
ընդհանուր դրութիւնը հարկաւոր
է դասի ընթացքում կոնկրետացնել:
Ողտակար կլինի, յեթե ուսուցիչն
սկսի ցույց տալ սոցիալիստական ա.թ.
չընապատը, վորի մեջ գտնւում են
յերեխաները: ԽՍՀՄ-ի այս կամ այն
առիթի ուսուցիչը, նայած թե վոր-

տեղ է գտնւում դպրոցը, — քաղա-
քում թե գյուղում, կարող են ցու-
ցադրել սոցիալիզմի հաղթանակը՝
տեղական նյութերով, ֆաբրիկների,
գործարանների, արհեստանոցների,
յերկաթուղիների, դպրոցների, կի-
նոյի, թատրոնների և այլ աճը—այս
բոլորը կոնկրետ որինակներով կարող
են ցույց տրվել շրջապատող իրակա-
նութիւնից:

Հատուկ դժվարութիւն չի ներ-
կայացնում նաև աշխատանքի սո-
ցիալիստական բովանդակութեան վեր
հանումը մեր ֆաբրիկներում և գոր-
ծարաններում: Ժամանակակից յերե-
խաներն ամեն որ հանդիպում են ցա-
րիզմի ժամանակներում ստրկած
մարդկանց, և նրանցից հաճախ լսում
են պատմութիւններ՝ մինչ հեղափո-
խութիւնը կապիտալիստի մոտ՝
ֆաբրիկայում, հատկապես կարվա-
հատիւր մոտ յեղած աշխատանքի
ընույթի մասին: Այս բոլորը հե-
տացնում են հատկանշաւու հին ժամա-
նակի աշխատանքի և այժմյան աշ-
խատանքի միջև յեղած տարբերու-
թիւնը:

Ուսուցիչը յերեխաներին պետք է
ցույց տա, թե առաջ վորքան աղքատ
ու հետամնաց էր Ռուսաստանը և
վորքան նա հարուստ և առաջադի-
յերկիր է դարձել ներկայումս: Ու-
սուցիչը պետք է հատկապես ընդգծի
առանձնակ միութեանական սոցիալիս-
տական հանրապետութիւնների Ժո-
ղովուրդների բարեկամութիւնը, ուր

*) Այս հոդվածն իրենից ներկա-
յացնում է 1937 թ. ոգոստոսի 28-ին
Մոսկւայի ուսուցչական կարճատեւ
դանընթացներում պրոֆ. Ա. Վ.
ՇԵՍՏԱԿՈՎԻ գեղուցման վրձատված
և վերամշակված սղագրութիւնը:

«Խ. Դ.» № 78-79 80, 81, 82
1937 թ.:

ապրում են մինչև 50 ժողովուրդ և մոտ 170 միլիոն մարդ:

Այս առաջին դասում հնարավորություն չկա դիմելու աշխարհագրական քարտեզին, քանի վոր աշակերտները դեռևս չգիտեն աշխարհագրությունը: Այնուամենայնիվ, յեղևում այն բանից, թե վորտեղ են գտնվում դպրոցը, ուսուցիչը կարող է խոսել այս կամ այն ժողովուրդի մասին, վորն ապրում է տվյալ կամ հարեման ուսյոնում:

Եստ կարելի է, վորպեսզի յերեխաները հասկանային, վոր իՍՀՄ միակ յերկրը է յերկրագնդում, վոր նա գտնվում է կապիտալիստական յերկրների շրջապատում, ալը դոյություն ունի մարդու շահագործումը մարդու կողմից: Այս հիմնական տարբերությունը հարկավոր է քացատրել յերեխաներին, հիշեցնելով, վոր նրանց ծնողները դեռևս ապրում էին այն պայմաններում, յերբ կային և՛ կապիտալիստներ և՛ կալվածատերեր՝ ցարի զինավորությամբ: Պետք է ընդգծել, վոր սրանից ընդամենը 20 տարի առաջ վոչինչացիներն ալը վարդերը, իսկ այժմ իՍՀՄ-ի աշխատավորներն ապրում են առանց կապիտալիստների և կալվածատերերի և ապրում են յերջանիկ, ուրախ և ունեւոր: Այս կապակցությամբ ուսուցիչը պետք է յերեխաներին պատմի կոմունիստական (բոլշեւիկներ) կուսակցության մասին, վորն աշխատավորներին ցույց տվեց ճանապարհ դեպի սոցիալիզմը և զեկավարեց բանվորներին ու գյուղացիներին ցարի և կալվածատերերի իշխանության տապալման համար մղած պայքարում, ինքնագործ իշխանության և սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում:

Հարկավոր է յերեխաներին հենց սկզբից, առաջին իսկ դասից ներշնչել, վոր առաջ կանգն այսպես չի յեղել, վոր այն փոխվել է: Այս դրութիւնը հնարավորություն է տալիս

ուսուցչին յերեխայի կյանքում առաջին անգամ նրա միտքն ուղղել պատմության տարրական հասկացողության ուղղությամբ՝ յորեւ մի դիտության մարդկային հասարակության մասին՝ տարբեր ժամանակաշրջաններում:

Տալով կրտսեր հասակի յերեխաներին պարզ, միանգամայն հանրամատչելի հասկացողություն պատմության մասին, ուսուցիչը, սակայն պետք է խորապես համակնա և հաստատուն կերպով յուրացնի այն, վոր մարդկության պատմությունը դասակարգերի պայքարի պատմությունն է: Հետագայում միջ դասախոսողությունն այնպես պետք է դնել, վորպեսզի 4-րդ դասարանի աշակերտը դասընթացի վերջում ինքը կարողանա այդ յեղրակացության հանդէ: Տալով տարեկան յերեխաները չեն կարող միանգամից հասկանալ պատմությունը, վորպես դասակարգերի պայքարի պրոցես, սակայն նրանք արդեն կարող են իՍՀՄ-ում դոյություն ունեցող դրության պատմական դարգացումից վորոշ տարրական պատկերացում ստանալ դասակարգային պայքարի մասին համեմատելով իՍՀՄ-ն 20 տարի առաջ դոյություն ունեցած Ռուսաստանի հետ, համեմատելով իՍՀՄ-ի ներկա դրությունը արտասահմանում դոյություն ունեցող դրության հետ:

Այսպես է մոտավորապես առաջին դասի բովանդակությունը, վորին մենք շատ մեծ նշանակություն ենք տալիս: Այդ դասի ճիշտ կազմակերպմանը պետք է առանձնակի մեծ ուշադրություն նվիրել, վորովհետեւ աշտեղ պետք է զբով պատմության նկատմամբ յերեխաների հետաքրքրության հիմքը: Հարկավոր է հենց սկզբից չնրանցնել յերեխային պատմությանից, ալ մոտեցնել նրան այն ձեւով, վոր նա համակնա պատմության կարեւորությունը, բոլոր այն յերեւոյթները նշանակությունն են, վոր պատմությունն է ընդգրկում:

Այնուհետեւ առաջին բաժնի դասը՝ «Մեր հայրենիքը հեռավոր անցյալում»՝ պետք է յերեխաներին տանի դեպի ամենահեռավոր ժամանակները մեր յերկրում: Այս հեռավորությունը կարող է մեծ խոչընդոտ հանդիսանալ դասի ճշգրիտ յուրացմանը: Ուսուցչին ստիպված կլինի յերեխաներին ծանոթացնել այդ հեռավոր անցյալի պատմությանն ալիլի մեծ ծավալով, քան այդ արվում է դասագրքում: Այս առանձնապես վերաբերում է նախադարյան մարդու կուլտուրային: Այնպիսի քաղաքներում, ինչպես Մոսկվան և, դրա համար հեռությամբ կարող են ողտագործվել թանգարաններում յեղած կոլլեկցիաները, սակայն լավ կլինի, յեթե հենց զարոցում լինեն մոզելներ, մակերեսներ, նկարներ, քանդակահարներ, վորոնցով կարելի յետաքրանել նախադարյան մարդու պատմությունը:

Այս յերկրորդ դասի հիմնական միտքը պետք է լինի ցուցադրել, վոր մարդկությունը վիթխարի տեւական կյանք է անցկացրել նախադարյան կոմունիզմի պայմաններում: Սակայն ուսուցիչը պետք է հիշի Լենինի խոսքերը՝ «Վոչ մի վոսկեղար չի յեղել մեղանից առաջ, և նախադարյան մարդը միանգամայն ճնշված է յեղել դոյության դժվարությամբ, բնության դեմ պայքարելու դժվարությամբ» (Լենին, Յերկերի ժողովածու, հատ. 4-րդ եջ՝ 182):

Յերեխաների հասկացողության համար շատ բարդ է առաջին բաժնի յերրորդ դասը՝ տոհմից դեպի պետությունը: Այս դասի գլխավոր նպատակն է ցույց տալ, թե ինչպես մարդիկ անխնդիր դարգացման և մասնավոր սեփականության տալիս չացման հետեւում, տոհմային և ցեղային կյանքից անցան դեպի հասարակական և անհատական անհավասարությանը, դեպի դասակարգային հասարակությանը և պետությունը: Այս հարցի առթիւ ուսուցչի համար ձեռնարկ է հանդիսանում

Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» գիրքը:

Այս դասում ամենակարեւորն այն է, վոր յերեխաներն յուրացնեն պետության մասին յեղած հասկացողությունը, վորպես փոքրամասնության կողմից մեծամասնությանը ճնշման դեմ, վորպեսզի նրանք հասկանան, թե վորտեղից առաջ յեկան իշխանները, խաները՝ գուղաղները (գործի տեսակ), գործը, դատարանը, բանաբը:

Այս դասը հանդիսանում է կարծես ներածական նյութ՝ հաջորդ, չորրորդ դասի համար, վորը պետք է կոնկրետ պատկերացում տա յերեխաներին այն մասին, վոր ինքնըդային Միության ժողովուրդները պատմականորեն դարգացել են վոչ միատեսակ կերպով: Վորոշ ժողովուրդներ, վորոնք դադարել են հողագործությամբ և մասամբ անասնապահությամբ՝ Ռուսաստանի հարավում, արագորեն անցել են դեպի հասարակության դասակարգային բաժանումը և դեպի պետության ստեղծումը վորպես փոքրամասնության կողմից մեծամասնությանը շահագործելու ու ճնշելու ձև: Իսկ ուրիշներն այս պրոցեսին հասել են ալիլի ուշ: Ուրարտական պետության, վոր դոյություն է ունեցել մեղանից 3000 տարի առաջ, և Միջին Ասիայի պետությունների ուրիշակներով ուսուցիչը յերեխաներին պետք է տա պետության, շահագործման դերի պատկերը, ըստ վորում պետք է ընդգծվի ստրուկների դերն այս հրեազույն պետություններում: Ստրուկների շահագործման մասին յեղած հասկացողությունը պետք է յերեխաներին մոտեցնի շահագործման հասկացողությանը նաև Փետրական և կապիտալիստական դարաշրջանների հաջորդ ետապներում: Այս դասից աշակերտը պետք է յուրացնի այն, վոր հնագույն պետություններում, ինչպես Կովկասում, այնպես և Միջին Ասիայում, յեղել

են բաղձաթիվ քաղաքներ, վորոնց մեջ զարգացել են արհեստը, առեւտուրը, կուլտուրան: Այս գեաղքում կարեւոր է ընդգծել, վոր Անդրկովկասի և Միջին Ասիայի պետութիւններն ավելի հին են, քան Արեւմտեայան Յեւրոպայի շատ պետութիւնները և հասկապես Գերմանիան:

Այդ նույն դասի յերկրորդ յենթաբաժինը խոսում է այն ժողովուրդների մասին, վորոնք հնում ապրել են Սիբիրում և Արեւելեյան Յեւրոպայում: Նա յերեխաներին պետք է ցույց տա պետութեան տարբեր քոչվոր-անասնապահների մոտ, սկսած ներքէն և հոնների մոտ: Թեկուզ և միմիայն տարբերը, քանի վոր մենք ինքներս եւ չղթներ սկսածացինք իր և հոնների պետական կառուցվածքի մասին յեղած մանրամասնութիւնները: Այս հարցն ինչպես հարկն է չի ուսումնասիրել մինչև հիմա: Այս հարցով զբաղվող պատմադէտները յենթաբաժնի յենթաբաժնի գեոգրաֆիկ շահով հեն ստուգված:

Այս դասում ուսուցիչն պետք է խոսի Սեւ ծովի հյուսիսային և արեւելեյան ափերում յեղած հին հունական գաղութների մասին: Ուսուցիչը դասադրքի համառոտ նշումը պետք է լրացնի մի քանի տեղեկութիւններով՝ հին-հունական և հռոմեական ստրկատիրական կուլտուրայի մասին, լուսաբանի հունների և սելյուկացիների միջև յեղած փոխհարաբերութիւնները, վորոնք վերջացան սրանից 2000 տարի առաջ սելյուկացի ստրուկների ապստամբութեամբ՝ Սալմակի գեկապարուութեամբ:

Այս բանը կարող է դասակարգային պայքարի լուսաբանում ծառայել:

յեւ ստրկատիրական հասարակութեան մեջ*)

Այս դասը վերջանում է մերձսեւծովեյան դաշտավայրերի քոչվոր-հոնների նկարագրութեամբ և նրանց կողմից հունական քաղաքների ավերման մասին յեղած հաղորդագրութեամբ: Վորպեսզի յերեխաներին պարզ լինի, թե հոնները վորտեղից են յեկել, պետք է դադարաւ տալ արեւմտաեւրոպայի քոչվոր ժողովուրդների և մերձսեւծովեյան տափաստանների ժողովուրդների մասին, ուր քոչվորները հոտեր եյին պահում և առաջ եյին շարժվում արոտավայրեր վորոններու, միանալով իրենց առաջնորդների գեկապարութեամբ, առաջնորդներ, վորոնք հետզհետե հոնների առաջնորդ Ատիլայի նման հզոր կառավարողներ եյին դառնում: Քոչվորներն իրենց եյին յենթաբաժնի ուրիշ քոչվոր և նրատակացի ցեղեր, վորոնք վաղուց ապրում եյին այդ ռայոններում, և հետո խառնվում եյին նրանց հետ: Պետք է ասել, վոր քոչվորների դուրքերը միատարր չեյին, նրա մեջ ներդրակվում եյին տարբեր ազգաբնակից խմբերի ամենից ավելի հարմար տարրերը և աղապիտով կազմվեց քոչվոր նախնուների հիմնական բանակը: Այս բանը հարկաւոր է բացատրել յերեխաներին նրա համար, վորպեսզի նրանք հեշտութեամբ կարողանան հասկանալ Չինգիզ խանի և Բաթուի նախնուները:

Հինգերորդ դասը նվիրված է սլաւոններին: Անհրաժեշտ է այդ դասում ընդգծել այն միտքը, վոր Արեւելեյան Յեւրոպայում ապրող սլաւոնները կազմել են յերեք մեծ ժողովուրդ-ուս-

*) Սալմակի այս ապստամբութեան մասին կա Ժերեխի «Последний Перисад и скифское восстание на Босфоре» գրքույկը: Պետական Ակադեմիայի նշումական կուլտուրայի հրատարակութիւն, 1933 թ.:

ուական, ոսկրախնական և բեկոռուսական: Սլաւոնների մասին պատմելու ժամանակ յերեխաները պետք է տեղեկութիւններ ստանան նաև նրանց աշխարհագրական հարեւանների մասին—ժամանակակից մարիների, մորդվանների, բուլղարական և խաղաքական թաղավորութեան մասին՝ Վոլգայի վրա, վորը հասնում էր մինչև մերձսեւծովեյան տափաստանները, և բյուզանդական կուլտուրայի մասին, իրենց ավելի բարձր կուլտուրայի, քան սլաւոնականը: Այստեղ եւ հենց պետք է նշվի սլաւոնների հարեւան լինելը գերմանական ցեղերի և վարյագների հետ:

Յերբ մենք այս դասն անցնում եյինք Յ-րդ դասաբանի յերեխաների հետ, ապա նրանք հաճախ շփոթում եյին այս ժողովուրդներին «վարյագ» խոսքը դրում եյին «ո»-ով, «Вар» (գոթ) խոսքից: Ի հարկե, չպետք է թույլ տալ այսպիսի գոեհեկացում: Հարկաւոր է, վորպեսզի յերեխաները միանգամից հասկանան, վոր «վարյագ» խոսքը ծագում է «վար» գին ված մարդ բառից:

Սրան զուգընթաց պետք է ասել Բյուզանդիայի մասին:

Այստեղ չարտի լինի այն կեղծ հայրենասիրութիւնը, վորով յի յեն միմիայն հին դասադրքերը, ուր խոսվում է քաջարի սլաւոնների մասին, վորոնք հաղթածում եյին Բյուզանդիային: Սլաւոն ցեղերի քաջութիւնը պիտի հիշատակել, սակայն չափապան կարեւոր է մատնանշել, վոր Բյուզանդիոնը բաղձադարյան կուլտուրա ունեցող պետութիւն էր: Այս բանը կարեւոր է հետագա դասերի համար, յերբ խոսք կլինի քրիստոնեւթեան մասին:

Այն ժամանակ յերեխաներին ավելի հեշտ կլինի հասկանալ, թե ինչու մենք գտնում ենք, վոր քրիստոնեւթիւնը ընդունելը հառաջագիմական

յերեւելութ էր, և վոչ թե ունեցիւն, ինչպես այդ պատկերել է Պոկրովսկին:

Ի տարբերութիւն այլ դասադրքերի, նոր դասադրքերում պատմվում է, վոր դեռ յեւ Յ-րդ դարում սլաւոնների մեջ արդեն կար դասակարգային շերտավորում, նրանք ունեւին իրենց Փեոդալները, իրենց տիրապետող խմբերը—բոյարներն ու իշխանները, վորոնք ըստ եյութեան ներկայացուցիչներ եյին արդեն կազմված պետական հիմնարկները՝ կիյեւի պետութեան մեջ Յ-րդ դարում: Այս պատմվածքը բոյարների յեւ սլաւոնական իշխանների մասին շատ կարեւոր է նրա համար, վորպեսզի ցույց տրվի, թե վարյագական իշխանները, վորոնք հանդես են գալիս հաջորդ դարում, ըստ եյութեան յեկել են պատրաստի պետական փոխհարաբերութիւնների վրա, վորոնք արդեն առաջացել եյին հենց սլաւոնական ցեղերի հասարակական զարգացման շնորհիւ:

Ուսուցիչը պետք է պատմի սլաւոնների մեջ անհամապատասխան առաջացման մասին: Դասադրքում առված է, վոր այդ անհամապատասխանութիւնն առաջանում է տեխնիկայի զարգացման հիման վրա, յերեխաներ արդի ու ձիերի զործածութեան հետեւաբով, ազատ հողատիրոջ զարուստներ առաջանալու հետեւանքով, հողը դալթելու յեւ մասնավոր սեփականութիւն դարձնելու հետեւանքով և իշխան կառավարիչների հանդես գալով, վորոնք վոչ միայն առեւտուր եյին անում, այլ և պատերազմ եյին մղում Բյուզանդիայի և վարյագների դեմ:

Սրան զուգընթաց պետք է նշել սլաւոնների գլխավոր քաղաքները՝ կիյեւն ու Նովգորոդը, յեւ վորմէ տալ աշակերտներին վորոչ հասկացողութիւն (քարտեզի վրա կամ հատուկ նկարներով) «վարյագներից

դեպի հուլիս» ճանապարհի մասին: Պետք է հիշել, վոր Կլուչեվսկու կոնցեպցիան Կիեվյան Ռուսի քաղաքային բնույթի մասին, վորն ընդունված է Պոկրովսկու կողմից, ճիշտ է: քաղաքներ քիչ կային, իսկ 8-րդ դարի վերջում սլավոնական ցեղերի հիմնական զբաղմունքը յեղել է յերկրագործությունը:

Դասադրքի հաջորդ բաժինը Կիեվյան պետությունն է: Վեցերորդ դասի յերկրորդ բաժինը Կիեվյան պետության առաջացումն է: Ըստ ծրագրի նա համարվում է յոթերորդ դասը: Պատմվածքն աշխուժացնելու նպատակով, ուսուցիչն անհրաժեշտաբար պետք է հիշատակի տարեգրական լեզնեղներ՝ վարյադական իշխանների մասին, վորոնք չկան դասադրքում, սակայն, վորքան բավական յայն չափով հարուստ յեն յեվ կան զրեթե բոլոր հին դասադրքերում (Կլուչեվսկի, Սոլովյեվ): Որինակ իշխանների հրավիրման մասին յեղած լեզնեղը՝ «Եկեք իշխեցեք և տիրեցեք մեզ»: Սակայն այս զեպրում պետք է ընդգծել, վոր դատարկության լեզնեղ է: Պուշկինի «Ուրդի յեղը» կարելի յե կարգադասարանում իբրեւ լեզնեղի որինակ, վարը պոետիկական ձև է ընդունել:

Այնուհետև ուսուցիչը հետզհետե գործ է ունենալու աշխարհագրական հատկացությունների հետ: Նա աւելի մանրամասն պետք է պատմի Բալտիկ ծովի, Սկանդինավյան թերակղզու մասին, այժմյան Շվեդիայի և Նորվեգիայի մասին: Վարյադական նվաճումների հատկացություն համար իբրեւ ձեռնարկ կարող են ծառայել թանգարանային կոլեկցիաները, վորոնց հետ ծանոթացումը պետք է սովորողների մեջ ամրացնի վարյադների մասին յեղած պատկերացումն իբրեւ նվաճումների, Բալտիկ ծովի ափերը կողապտիչների: Պատմելով վարյադների մասին, պետք է ընդգծել, վոր վարյադ-

նվաճողները բազմաքանակ չեն յեղել: Նրանք արագորեն ձուլվել են սլավոնների հետ և յուրացրել են նրանց լեզուն:

Յերեխաները պետք է հասկանան, վոր 10-րդ դարու սկզբում Կիեվյան իշխանության մեջ մտնող հողերը կոչվեցին Կիեվյան ուս: Կնյազ իգորի մասին յեղած պատմվածքում պետք է ընդգծել հարկերի հալածման մոմենտը, վորպես բնակչության շահագործման հիմնական աղբյուրը: Ուսուցիչն պետք է պատմի մանրամասն ժողովրդից չըջիկ հարկ հալածելու նշանակության (ПОЛНОДЬЕ) մասին:

Յերեխաները կտարվեն այն պատմությունով, թե ինչպես Իգորը հարկ եր հալածում զրեվյաններից (անտառաբնակիներից) ժողովրդից և ինչպես նրան սպանեցին: Թերեւ յերեխաներին զեվար կլինի միանգամից հասկանալ այն ժամանակաշրջանի շահագործման բնույթը, վորի մասին Մարքսը իր «Գաղտնի գիւղանադիտություն» յերկի մեջ ասում է, թե այդ շահագործման այն չըրջանն էր, յերբ զոյություն ունեւ վաստակոտ առանց ալատի, և ուսմիկները միայն հարկ էին վճարում: Այստեղ զեռես չկան Փետրալյան ծավալուն հարաբերություններ: Այստեղ զոյություն ունեն այն հարաբերությունները, վորոնք արտացոլվել են ժողովրդից չըջիկ հարկ հալածելու սխառմի մեջ:

Կարող է պատահի, վոր յերեխաները չյուրացնեն ժողովրդից չըջիկ հարկ հալածելու (ПОЛНОДЬЕ) և Փետրալական շահագործման միջև յեղած տարբերությունը, սակայն համենայն դեպս անհրաժեշտ է, վոր յերեխաներն պատկերացում ստանան, թե Փետրալիզմն իսկույն չի ստեղծվել, այլ վոր յեղել են Փետրալիզմին մոտենալու վորոշ ետապներ: Յեվ մասնավորապես այսպիսի միջանկյալ ետապ է յեղել հարկի հալածումը: Իգորի սպանու-

թյան մասին յեղած պատմվածքը կարող է ոգնել յերեխաներին հասկանալու, վոր այստեղ կար դասակարգային անհավասարություն, վոր այստեղ կար պայքար իշխանների դեմ, շահագործողների դեմ: Սակայն ուսուցիչն իսկույն պետք է ընդգծի, վոր ժողովրդի ասպատակությունը յեղել է տարբերային, անկազմակերպ, դրա համար ել այն հեշտությունը է ճնշվել Իգորի ալրու: Ուրալի կողմից: Այս զեպրում պետք է բացատրել Ուրալի վրեժխնդրության մասին յեղած տեղեկությունների լեզնեղարային բնույթը:

Այնուհետև վարյա և շատ կարելի է բարդ հարցը՝ քրիստոնեւթյան մասին: Կիեվյան պետության մեջ քրիստոնեւթյան պատմությունը սկսվում է այն բանից հետո, յերբ Ուրալն զնաց Բյուզանդիոն և այնտեղ քրիստոնեւթյուն ընդունեց, վորովհետև այդ բանը պետք է նպաստեր սլավոնական ցեղերի միացմանը և յեւթարկել նրանց իրենց իշխաններին: Ուրալի կողմից քրիստոնեւթյան ընդունելն առաջին քայլն էր այս ուղղությամբ: Մեր դասադրքում պատմվում է թե Ուրալին դուր եր վարյա այն, թե ինչպես հունական քահանաները քարոզ էյին կարդում իշխանների իշխանության սրբազան լինելու մասին: Դրա համար ել նա համոզում էր իր վորդուն՝ Սվյատոսլավին քրիստոնեւթյուն ընդունել, սակայն Սվյատոսլավը զերադասեց սլավոնների միացման հարցը վճուել այլ մեթոդով՝ գնեքի մեթոդով: Դասադրքում պատմվում է Սվյատոսլավի և այն պատերազմների մասին, վորոնք կարելի յե մեկնաբանել վորպես բռնի միացման ձեւերից մեկը: Դրանք բնորոշ էյին Կիեվյան առաջին իշխանների և մասնավորապես Սվյատոսլավի համար:

Ութերորդ դասը իշխան Վյաչիմիրի, նրա կողմից քրիստոնեւթյուն մտցնելու և իշխան Յարոսլավի Իմաստունի մասին է: Այս դասում

ուսուցիչն ուղադրությունը պետք է կենտրոնացնի այն պայմանների վրա, վորոնց մեջ տեղի ունեցավ Կիեվյան իշխանների կողմից քրիստոնեւթյան ընդունումը, և հին սլավոնական աստվածների վրջնացումը: Գրիստոնեւթյան առաջադիմական դերը սերտորեն կապված է յեղել սլավոնների մեջ հունական կուլտուրայի տարածման հետ: Ահա թե ինչու շատ կարեւոր է նշել՝ զեռես դասընթացի սկզբում՝ Բյուզանդիայի կուլտուրական դերը: Յերեխաներին հարկավոր է ցույց տալ բյուզանդական կուլտուրայի թանգարանային հուշարձանները: Զուգարթաքար կարելի յե ոգտագործել ժողովրդական յերգերը և բիլիաները, նախապատվություն տալով սեփական վերապատմելուն, քանի վոր բիլիաների տեքստի ոգտագործումը չափազանց զեվար է վորր յերեխաների համար: Վերապատմելու հետ զուգընթաց կարելի յե քաղվածքներ բերել իյա Մուրոմեցի, Դոբրինի Նիկիտիչի և Ալյոշա Պոպովիչի քաղագործություններից, ցույց տալ համապատասխան թեկուզ և Վանեցովի «Յերեք դյուցազններ» նկարը: Սա տալիս է պարզ պատկերացում այդ ժամանակաշրջանի մասին: Ութերորդ դասը վերջանում է իշխան Յարոսլավի Իմաստունի բնութագրմամբ: Շատ համառոտ պատմվում է Կիեվյան պետության առաջին որենքների ժողովածվի մասին: Ուսուցիչը պետք է ընդգծի, վոր որենքների այս ժողովածուն, պաշտպանելով Փետրալ-իշխանների իրավունքները, ուղղված եր ընդդեմ հասարակ ժողովրդի-առմիկ դյուցազնների և ստրուկ-ճորտերի: Այս պատմվածքը դասադրքում պետք է ընդարձակել տրվածի համեմատությամբ:

Այնուհետև տրվում է Կիեվյան պետության կառուցվածքի մասին յեղած դասը: Այս դասը, վորը կոչվում է «Ժողովրդական տարբերային ասպատակություններ Կիեվյան պե-

տուլթյան մեջ» դժադրում է վուչ մի-
ախ աղբ ժամանակի հաստատու-
թյան դատարարության կառուցվածքի
պատկերը, այլ և բովանդակում է
մի քանի պատմվածքներ մասնաճյուղի
տարբերության բողոքներին մասին:
Հենց սկզբից պետք է ընդգծել դա-
տարարության պայքարի տարբերակին
բնույթն աղբ դարաշրջանում, վուչը
տարբերվում է 19-20-րդ դարերի
ապստամբությունների կազմակերպ-
ված բնույթից:

Այստեղ հարկավոր է նշել մի մո-
մենտ յեմա աղբ Վլադիմիր Մոնոմա-
խի մասին յեղած հարցն է: Նա
կրթված մարդ էր, նրա մայրը բոլ-
ղանդական կայսրի աղջիկն էր, նրա
ընտանիքն ամուսնացած էր գերմանական
կայսրի հետ, իսկ ինքն ամուսնացած
էր անդլիական թագավորի աղջկա
հետ: Արդյոք ինչու՞ համար է այս
բանը պատմվում յերեխաներին: Իսկ
սա խոշոր քաղաքական նշանակու-
թյուն ունի, վորովհետև Վլադիմիր
Մոնոմախն իր մեջ մարմնավորում
էր այն պետության ներկայացու-
թյունը, վորը փոքր, հետ ընկած
անկյուն չէր, այլ ուժեղ և մեծ պե-
տություն էր, վուչ պակաս ուժեղ,
քան, որինակ աղբ չըջանի Գերմա-
նիան: Այս հարցին իբրեւ ձեռնարկ
կարող է ծառայել Գրեկովի «Ֆեո-
դալական հարաբերությունները Կի-
յիվյան պետության մեջ» գիրքը (ա-
մենից լավն է 1937 թ. հրատարակու-
թյունը): Բացի այդ, կա Մարքսի
«Ժամանակագրական քաղվածքներ»
հոդվածը, վորը տպագրված է 1936
թիվ «Բոլշևիկ»-ի № 24-ում: Ե

Տասերորդ դասը նվիրված է Նով-
գորոդի յերկրին: Ուսուցիչը պետք է
հիշի, վոր Կիյվի պետության քաջ-
քաջումը տեղի ունեցավ այն բանի
հետեւանքով, վոր Ֆեոդալական իշ-
խանություններում զարգացավ մանր
բոյարների և իշխանների հողատի-
րությունը: Հարկավոր է հատակ
կերպով պատկերացնել Կիյևյան
պետության ամենամեծ գործի դրու-
թյունը: Նրա անկումը տեղի ունե-

ցավ վուչ թե նրա համար, վոր աղ-
քատացավ կամ քայքայվեց, այլ
նրա համար, վոր նրա առանձին մա-
սերն աճեցին, դորացան: Նովգորո-
դը-նման խոշոր ծաղկած և դարձա-
ցած մասերից մեկն էր: Դրանից հե-
տո բաժանվեցին Վլադիմիր-Սուզդա-
լայան Ռուսը և Գալիցիա-Վոլինյան
յերկիրը: Գալիցիա-Վոլինյան յերկրի
մասին, զԺրախտաբար, մենք միայն
հիշատակում ենք: Տեղի սղությունը
թույլ չտվեց մեղ դասադրքում ավե-
լի մանրամասն ասել աղբ յերկրի մա-
սին: Համենայն դեպս յերեք հիմնա-
կան մասերի այս բաժանումը շատ
կարեւոր է նշել և առաջին հերթին
հարկավոր է աշակերտներին պատմել
Նովգորոդյան յերկրի մասին, մատ-
նանքելով այն, վոր Նովգորոդի
գլուխ կանգնել է յին հարուստ հողա-
սերեր, բոյարներ և խոշոր վաճա-
ռականներ, վորոնք առեւտուր է յին
անում Արեւմտյան Յեւրոպայի և
Գերմանիայի հետ: Այս դեպքում հար-
կավոր է պատմել նաև Նովգորոդ-
յան վեչեյի (հանձնաժողովի) մա-
սին:

Մեր դասադրքում չի իրեալաբա-
նացվում աղբ վեչեն, ինչպես աղբ
հաճախ արվում էր առաջ: Նրանում
մենք վուչ մի գեմոկրատիա չենք դրո-
ւում: Դա բոյարների և առեւտրա-
կանների կառավարման ոլլկարիա
կան ձեւն էր: Վեչեյում արհեստա-
վորների և չքավորների յեղութիւնը
կարելի չէ ցույց տալ պատի մեծ
նկարի վրա՝ «Վեչեն Նովգորոդում»:
Այնուհետեւ, նորից պետք է ընդ-
գրծել սպասամբության տարբերա-
նությունը Նովգորոդում: Դրանց
թիւը չատ էր—մոտ 40 ապստամբու-
թյուն 13-րդ դարից մինչև 15-րդ
դարը:

Հարկավոր է չեչար դնել Նովգո-
րոդի պայքարի վրա շինողների գեմ,
վորոնք գրավել է յին Նովգորոդյան
հնագույն հողերը և գերմանական
«չուն ասպետները» վրա, ինչպես
նրանց անվանում էր Մարքսը: Հար-
կավոր է գունեղ կերպով յերեխանե-

րին պատմել հռչակավոր Լեդովոյե
(սառցային) մեծ ճակատամարտի
մասին, վորի մեջ գերմանացիները
գլխովին ջարդվեցին: Այս հինա-
վուրց հաղթանակը գերմանացիների
վրա— հերքում է ֆաշիստական այն
սուտը, թե գերմանացիները սլավոն-
ներից յերբեք չեն ջարդվել:

Այս բաժնի վրջին դասը՝ Կիյևյան
պետության մասին՝ նվիրված
է Սուզդալսկու Ռուսին: Նա
տալիս է պատկերացում Կիյևյան
պետության մեջ յերկրորդ խոշոր
կենտրոնի առաջացումը— Ռոստովո-
Սուզդալսկու վնչագության առաջա-
ցումը, վորը հետո վերանվանվեց
Վլադիմիրովո— Սուզդալսկու վնչա-
գություն: Այս վնչարոնք մինչև մոն-
ղոլական նվաճումներն այնքան ուժեղ
չէր, ինչպես Նովգորոդը: Նա բա-
ժանված էր մանր տիրակալություն-
ների և դրա համար չկարողացավ իս-
կական հակահարված տալ հարձակ-
վող մոնղոլական նվաճողներին: Այս-
տեղ կարելի չէ ողտադործել դասա-
դրքի քարտեզը, ուր ցույց են տըր-
ված Ռոստովը (Յարոսլավսկի) և

Սուզդալը: Դասադրքի յերկրորդ քար-
տեզում ցույց են տրված այնպիսի
քաղաքների վայրերը, ինչպես Մոս-
կվան և Վլադիմիրը: Այս նույն քար-
տեզում նշված է Չուդովսկի լիճը:
Ոգտադործելով քարտեզը, կարելի
չէ ակնհայտ կերպով պատմել շվեդ-
ների և գերմանացիների կողմից սլա-
վոնական հողերը դրավելու փորձեր
կատարելու մասին: Գալիցիայի կնչա-
գության մասին մենք միայն հիշա-
տակում ենք, սակայն նրա մասին
նյութեր կարելի չէ գտնել: Սոյովյեվի
և Կլյուչեյսկու դասընթացներում:

Անվիճելի չէ, վոր այս բոլոր մե-
թոդական ցուցմունքները պետք է
գիտնել միայն իբրեւ նախնական:
Պատմության դասավանդման կայուն
մեթոդի ստեղծում հանդիսանում
է ներկայումս առաջնահերթ խն-
դիր, վորը պատմական գիտու-
թյունների աշխատավորները պետք է
լուծեն միմիայն ամենասերտ միու-
թյամբ՝ մանկավարժ-պրակտիկների
հետ միասին:

(«ԶԿ»-ից)

ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

1.

Մեր դարոցների ուսուցիչները յերբեմն կարծում են, թե ԽՍՀՄ-ի պատմության հին շրջանը դաստիարակչական աշխատանքի համար նյութ չի տալիս, վոր պատմության դաստիարակչի ազդեցությունն աշակերտներին վրա սկսվում է միայն XIX դարի դասընթացից։ Սա բացատրվում է նրանով, վոր ուսուցիչը հաճախ արևելյան կերպով ուսուցման հարցերն առանձնացնում է դաստիարակությունից, աչքաթող անելով, վոր դաստիարակության հիմքը հենց հանդիսանում է պատմության մարքսիստական ըմբռնման տիրապետումը։

Պետք է ամեն կերպ վողջունել ուսուցչի ձգտումը՝ դասերի ընթացքում պերճորեն շարադրել պատմական դեպքերը և գրանով գրտվել աշակերտներին։ Բայց այստեղ չի կարելի մոռանալ, վոր յուրաքանչյուր պատկեր, յուրաքանչյուր բառ, աղյուղում են յերեխաների գիտակցության վրա, արթնացնում են նրանց միտքը և պետք է կոմիեն վորոշ հայացքներ ու հասկացողություններ։ Պետք է վող միայն հաստատուն իմանալ, թե պատմության դասընթացը դաստիարակության ինչպիսի հնարավորություններ է բաց անում, այլ և կարողանալ այնպես շարադրել նյութը, վորպեսզի իսկապես իրացնել այդ հնարավորությունները։

*) Թարգմանված է՝ «Исторический журнал» № 12, 1937 г.

Դաստիարակչական աշխատանքի գլխավոր աղբյուրն այրոբեմներն անխնդելորեն կապված են միմյանց հետ։ Միևնույն նյութը հիմք է տալիս մի շարք հարցեր դնել աշակերտի առաջ։ Դաստիարակչական աշխատանքի վորեն մի խնդրի լուծումն անչեղորեն տանում է դեպի նրան մոտիկ ուրիշ դաստիարակչական խնդիրներով դրադելու անհրաժեշտությունը։

Նշենք մի քանի այդպիսի խնդիրներ, վորոնք բղխում են պատմության մարքսիստորեն լենինորեն կառուցված դասընթացի ուսումնասիրությունից։

Հիմնական խնդիրը — խորհրդային հայրենասիրության դաստիարակությունն է. այսինքն՝ իր հայրենիքի համար գիտակցական հպարտության դաստիարակություն, հայրենիք, վոր առաջինը մարդկության պատմության մեջ կառուցեց սոցիալիստական հասարակարգ. նրա (սոցիալիստական հասարակարգի) հետագա ամրացման և կոմունիզմի լիակատար հաղթանակի համար պայքարելու անհրաժեշտության գիտակցության դաստիարակություն. մեր շինարարությունը խոչընդոտ հանդիսացող բոլոր թշնամիների դեմ պայքարելու պատրաստակամության դաստիարակություն. դեպի մեր դաստիարակչին թշնամիներն ատելություն պատվաստելը։

Այս առաջին խնդիրն անխզելիորեն կապված է յերկրորդ խնդրի հետ —

295
242

դաստիարակչին պայքարի, իրեն պատմության հիմնական շարժիչ ուժի նշանակության հասկացողության, դաստիարակչին պայքարի պատմական ձևերի և պրոլետարիատի գիտատուրայի հասկացողության դաստիարակության հետ։

Սոցիալիզմի համար պայքարող ակտիվ մարտիկը — սոցիալիստական մեծ հայրենիքի քաղաքացին — դրարոցում պետք է հիմք ստանա գիտական, մարքսիստական աշխարհայացքի հետագա տիրապետության համար։ Այս կապակցությամբ պատմության դասընթացի ուսուցման աշխատանքը պարտավոր է հետապնդել — ակտիվ, մարտերիայիստական աշխարհայացողության հիմունքները յուրացրած, մարտնչող անաստված դաստիարակելու նպատակը, իսկական ինտերնացիոնալիստ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի ամրացման և համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար պայքարող մարտիկ, լենինյան — ստալինյան աղյուսին քաղաքականության հիմունքները հասկացող, ԽՍՀՄ-ի ժողովուրդներին խորապես հարգող մարտիկ դաստիարակելու նպատակ։

ԽՍՀՄ-ի պատմության դասընթացի ուսումնասիրությունը հիմք է տալիս ԽՍՀՄ-ի քաղաքացու վրա դրված սոցիալիստական պարտականություններն աշակերտի կողմից գիտակցելու, նրան ներշնչելու իր մեջ հաստատուն կամք և կոմունիզմի համար պայքարելու կարողություն կոմիելու ձգտում։ Կուլտուրայի և գիտության նշանակության հասակ հասկացողությունը ժողովուրդների պատմության մեջ, անկասկած, աշակերտի մեջ կրքազացնի ձգտում տիրապետելու կուլտուրայի և գիտության նվաճումներին ներկայիս նրանց դրությունը։ Սրա հետ միասին պատմության դասընթացը ցույց կտա յերևաններին գիտության և կուլտուրայի զարգացման սահմանափակությունը դաստիարակչին հասարակության մեջ

և նրանց ըստ ամենայնի զարգացման լայնածավալ հնարավորությունները սոցիալիզմի որոք։

Այժմ անցնենք մեր կողմից առաջադրած խնդիրներին բննարկությանը պարոցում կատարվող աշխատանքի կոնկրետ որինակներով։ Այս հոդվածում կանգ կառնենք միայն խորհրդային հայրենասիրությունը դաստիարակելու վրա։

Պրոֆեսոր Ա. Վ. Շեստակովի խըմբագրած ԽՍՀՄ-ի պատմության համառոտ դասընթացի ամենաարժեքավոր հատկությունը կայանում է նրանում, վոր նա աշակերտի մեջ խորհրդային հայրենասիրության զարգացման համար ըստ լայն հիմք է տալիս, արմատապես տարբերվելով նախահեղափոխական շրջանի դաստիարակչից, վորոնք նացիոնալիզմի և չովինիզմի թույն ելին սրկում։

Սակայն պատմական նյութի հիման վրա ինչպես պետք է իրացնել խորհրդային հայրենասիրության դաստիարակությունը։

Այդ խնդրի ճիշտ լուծումը պահանջում է աշակերտների մեջ վատ պատկերներ ստեղծել, վորին պետք է ուղեկցեն մարքս — լենինյան վերլուծությունը և այդ պատկերների ընդհանրացումը։ Դիմենք 5—7 դասարաններում այժմ անցկացվող ԽՍՀՄ-ի պատմության դասընթացի դասընթացին։

Մեր աշակերտը հպարտանում է նրանով, վոր ԽՍՀՄ-ն աշխարհում առաջին յերկիրն է, վորը յերկրագնդի մեկ վեցերորդ մասում սոցիալիզմ կառուցեց։ Աշակերտը պետք է նույնպես հասկանա, թե ինչպես բան վորենքի ու գյուղացիների անողոր պայքարը շահագործող դաստիարակչի դեմ, թե ինչպես ԽՍՀՄ-ի ժողովուրդների հաղթական հերոսական պայքարն անկախության համար սոցիալիստական հասարակության բուսեղծագործողներ կոմիեց։

Այս բանն աշակերտների մեջ հետաքրքրություն կստեղծի գեղի ԽՍՀ



Միութեան պատմութիւնը: Այստեղից էլ բոլորովն են այն հանգուցային հարցերը իՍՂՄ-ի պատմութեան մեջ, վերոնց վրա պետք է հաստատել ուշադրութիւն դարձնել: Աշակերտները հետ միասին անհրաժեշտ է հետևել այն բանին, թե ինչպես եր ձևակերպվում ուսումնական պատմութիւնը, քայլ առ քայլ պատմա- ժամանակագրական հետևողականութեամբ ուսումնասիրելով մեր հայրենիքի և նրա բազմաթիւ ժողովուրդների առաջադեմական դարգացումը: Միաժամանակ վոչ մի ղեկավարում չպետք է մոռանալ կրկնել աշակերտներին, վոր այդ շրջանում խոսքը դասակարգային հասարակութեան պատմութեան մասին է, վորի հիմքը շահագործումն էր, և վոր միայն պրոլետարական հեղափոխութեամբ վերացրեց շահագործումը, վերացրեց դասակարգերը:

Բերենք մի քանի որինակներ: Խոսելով Կիւմիյան պետութեան մասին, վոչ մի կերպ չի կարելի բնորոշել այն իբրև հետամնաց պետութիւն: Պետք է խստորեն ընդգծել, վոր Յարապի և Վլադիմիր Մոնոմախի ժամանակների Կիւմիյան պետութեանն էր ժամանակի Յեվրոպայի պետութիւնների հետ միևնույն մակարդակի վրա յեր կանգնած: Պարտադիր կերպով պետք է նշել Կիւմիյան պետութեան տնտեսական և կուլտուրական արագ զարգացումը և նրա միջադպիսին նշանակութիւնը: Միաժամանակ պետք է ցույց տալ ուսմիկին հողին ամրացնելը և նրա դաժան շահագործումը, նրա քայքայումն իշխանական յերկպառակութիւնների հետևանքով:

Վերլուծելով ուսումնական հողերի միացման պատմութիւնը Մոսկւայի իշխանութեան շուրջը, պետք է ընդգծել այդ պրոցեսի առաջադիմական լինելը: Անհրաժեշտ է հիշել Ենգելսի արտահայտութիւններն արքայա-

կան իշխանութեան դերի հարցի մասին:

«...արքայական իշխանութիւնը das konigtum այդ ամբողջ համընդհանուր շխտութեան մեջ առաջադիմական տարր եր, — այդ միանգամայն ակներև է: Նա կարգի ներկայացուցիչն էր անկարգութեան մեջ, կազմավորող ազգի ներկայացուցիչը հակառակ նրա (ազգի) խրոսովարար վաստակաւ պետութիւնների բաժանմանը»¹⁾:

Անկախաձ, նույնպիսի առաջադիմական դեր է յիշ խաղում Մոսկւայի իշխանները: Սակայն պետք է ընդգծել աշակերտներին, վոր Մոսկւայի պետութեան կազմվելը բոլորովն խաղ ընդգծ չեր կրում: Գա կարելի չէ պարզել թեկուզ Նովգորոդի միացնելու պրոցեսում: Նովգորոդում բնականութեան հիմնական մասը կողմնակից եր Մոսկւային միանալուն: Նովգորոդը Մոսկւային միացնելու պրոցեսը՝ առաջադիմական եր: Իսկ Նովգորոդը Լիտւային միացնելը լեհական պաների ղեկի սկզբից է վեր ուսումնական հողերն ունեցած զավթողական նպատակների ու ձգտումների իրագործում կրկնել: Միացնելով Նովգորոդը, Մոսկւայն ստրկացրեց և ամբերեց այն:

Այստեղ ուսուցչին հարկաւոր է ամուր հիշել Ենգելսի հոգվածից վերևում բերված պարբերութեան վերջավորութիւնն այն առթիւ, վոր արքայական իշխանութեան կողմից ստրկացման և կողոպտման են յենթարկվել նրա դաշնակիցները: Այդ դրույթը նշանակալից չափով կիրառելի չէ նաև Նովգորոդի վերաբերյալ:

Վերջապես, անպայման պետք է ընդգծել և այն, վոր ուսումնական հողերը համաբերով Մոսկւայի շուրջը,

1) К. Маркс и Ф. Энгельс «О разложении феодализма и развитии буржуазии». Сбор. соч. т. XVI, часть I-я, стр. 445. Партиздат. 1937 г.

իշխաններին ղրկելով քաղաքական իշխանութիւնից և դրանով իսկ վերջ դնելով քաղաքական ջլատմանը, Մոսկւայի թագավորները բոլոր միջոցներով պաշտպանում էին նույն իշխաններին, բոյարներին և ծառայող մարդկանց տիրապետութիւնը գլուղացիների նկատմամբ:

Քննելով Մոսկւայի պետութիւնը բազմազգ պետութեան վերածվելու հարցը, նմանապես հետագա թեմաներում ուսումնասիրելով ուսումնական պետութեան նոր զավթումները, պետք է ցույց տալ նրանց նշանակութիւնը Մոսկւայի ուժեղացման համար: Սակայն դրա հետ միասին վոչ մի ղեկավար չի կարելի աքողել այդ ժողովուրդների շահագործումը Ռուսաստանի տիրող դասակարգի ներկայացուցիչների կողմից:

Ուսումնասիրութեան նույնպիսի պլան պետք է կազմել նաև այնպիսի բաժինների համար, ինչպես Պետրոս I-ի թագավորական գործունեութիւնը, կապիտալիզմի դարգացումը և այլն: Այսպիսով, մենք պետք է սովորեցնենք աշակերտին հասկանալ դարգացման առանձին և տարբեր առաջադիմական լինելը և այդ դարգացման ուղիները, տալ նրանց ճիշտ գնահատականը, այսինքն՝ հայտարարել նրանց դասակարգային ելուցիւնը:

Բարձր դասարաններում (8—10) այս խնդիրը կոնկրետ նույնի ընդարձակման հետևանքով կբարդանա: Պետք է տեսական հարցեր դնել. որին նաև, իՍՂՄ-ի պատմութեան պերիոդիզացիան, իՍՂՄ-ի պատմութեան ուրիշ յերկրների պատմութեան հետ ունեցած կապի ամելի լայն ուսումնասիրութիւնը:

Պրոֆեսոր Ա. Վ. Շեստակովի խաղաղած դասաւրբին նվիրված հոգվածներում մեծ ուշադրութիւն եր դարձված մեր հայրենիքի թշնամիների զավթողական ձգտումների ղեկ իՍՂՄ-ի ժողովուրդների հերոսական պայքարի ղեկիցիկ ցուցադրմանը:

